

ԲԱՌԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Անվանի լեզվաբան Զր. Աճառյանը բավականին համոզիչ փաստերի և դիտողությունների միջոցով հայագիտության բնագավառում ամրապնդեց այն հիմնական կարծիքը, որի համաձայն գրաբարը ժամանակի **ժողովրդախոսակցական լեզուն է**: Եվ ոչ միայն այսքանը, հենվելով նաև եզրինկ Կողբացու հետևյալ՝ «քանզի յորժամ մեք ասենք՝ թե սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ» դիտողության վրա և հատկապես հաշվի առնելով ընդհանուր խոսակցական լեզվում (ավանդված երկերում) հիմնական իրողություններից դուրս մնացած և բարբառային երանգով արտահայտված լեզվական տարրերի առկայությունը՝ հավաստեց նաև V դարում բարբառների գոյության փաստի մասին¹:

Գետագայում Վ. Առաքելյանը բարբառային տարրերի գրական լեզու ներբափանցելու խնդրին անդրադառնալիս նկատի է առնում համանիշային ճոխ համակարգի տարբեր բարբառներից գալու հանգամանքը, ավելացնում է. «Բարբառային տարրերը իրենց զգացնել են տալիս նաև հնչյունաբանորեն: Որքան էլ որ հրատարակությունների մեջ հրատարակիչները սրբագրում են ըստ գրաբարի, այնուամենայնիվ նկատում ենք կանոնիկության սահմաններից դուրս միտող հնչյունական տարբերակումներ, որոնք այլ կերպ չեն կարող բացատրվել, քան այնպես, որ բարբառային հնչյունափոխական երևույթներ են»²: Այստեղից ոչ միայն հասկանալի է դառնում, որ «ըստ գրաբարի» արտահայտությամբ նկատի է առնվում այն լեզվական իրողությունները, որոնք համընդհանուր են մեզ ավանդված աշխատություններում, այլ նաև սովորական է համարվում բարբառային հնչյունական երևույթների առկայությունը դրանցում: Իհարկե, հայերենագիտության ներկայիս տվյալներով՝ ինչպես անհնար է ամբողջական պատկերացում կազմել ձեռագրերում հետագայի փոփոխությունների մասին, այնպես էլ չենք կարող բացատրել մի շարք երևույթների նախնական լինելը: Մինչդեռ, ինչպես նկատում է Վ. Առաքելյանը, «Այս բնագավառով լեզվաբանները կամ չեն զբաղվել կամ եթե զբաղվել են, հնչյունափոխական գարտուղի շեղումները համարել են հետագա դարերի նստվածքներ, գրիչների սխալմունքի կամ դիտավորյալ կատարված փոփոխությունների արգասիքներ»³: Այնինչ, հեղինակները բարբառային ձևերը առանձնապես կարող էին գործածել երկխոսությունների մեջ՝ ենթագիտակցաբար տարվելով իրենց հարազատ բարբառի ազդեցությամբ:

Նույնը նկատելի է նաև Փարպեցու առումով:

Կանոնավոր ձևերի հետ միատեղ կամ էլ առանձին՝ կանոնիկության սահմաններից դուրս միտող հնչյունական տարբերակներով բառերի բազում օրինակներ առկա են նաև Ղազար Փարպեցու երկերի քննական բնագրում: Վերջինս կազմվել է Ստ. Մալխասյանցի և Գալուստ Տեր-Ակրտչյանի կողմից հրատարակում եղած մի քանի ձեռագրերի հիման վրա, որոնցից ամենահինը և, ըստ երևույթին, ինչպես համեմատության արդյունքներն են թույլատրում գի-

տական բնագիրը կազմողներին եզրակացնելու, եղածների մայր օրինակը 1672 թ. Վրիզոր երեցի ձեռքով Բաղեշում ընդօրինակվածն է «Չ–ն (= 8) ներկայումս միակ մայր ձեռագիրն է, որ իբրև աղբիւր է ծառայել մինչև այժմ հայագիտութեան բնագաւառում կատարուած թէ Պատմութեան և թէ Թղթի բոլոր տպագրութիւններին և եղած միւս ընդօրինակութիւններին (էջմիածնի №1688 ձեռագրին, Վենետիկի օրինակին և Վիեննայի օրինակին): Նա ծառայել է տպագրութիւնների համար աղբիւր ոչ անմիջապէս, այլ միջնորդութեամբ անխնամ ընդօրինակութիւնների: ... Ղազար Փարպեցու Պատմութեան և Թղթի ներկայ հրատարակութեան մէջ առաջին անգամ գործ է դրուած այս մայր Ձեռագիրը՝ համեմատութեան համար»⁶: Այսուհանդերձ, ինչ–ինչ սրբագրութիւններով մեզ մատուցածը բնական է, որ հրատարակիչները չէին էլ կարող վերջնական համարել. «ընթերցողին մնում է հաւատալ մեր հաւաստիացմանը, մինչև որ լոյս տեսնի Փարպեցու մի նոր քննադատական հրատարակութիւն»⁶: Եվ իրոք, Բ. Սարգիսյանի և Ն. Բյուզանդացու գրախոսություն–քննությունները ցույց են տալիս, որ այն կամա թե ակամա սխալաշատ է, Բյուզանդացու խոսքով «կատարեալ ուսումնասիրութիւն կարող էր սրբագրել զայնոսիկ 400 անգամ միտ դնելով մատենագրին լեզուին յատկութեանց և պատմութեան ընթացքին»⁷:

Այնուամենայնիվ, առայժմ այլընտրանք չունենալով, քննական բնագրով հաստատված բառատարբերակներն անխտիր ներկայացնում ենք որպէս վկայութիւններ հենց Փարպեցու կողմից: Իսկ բառատարբերակներն իրենցից ներկայացնում են հնչյունական որոշ զանազանություն ունեցող, բայց իմաստային նույնությամբ բառային միավորները⁶: Ակնհայտ է, որ այսպիսի տարբերակների հիմքում մեծ մասամբ ընկած է այս կամ այն հնչյունափոխական երևույթը: Իրողության ավելի լայն ընդգրկման տեսակետից նպատակահարմար է սրանցից որևէ մեկով պայմանավորված զուգահեռ ձևերին համատեղ ներկայացնել նաև նույն իրողությանը հարող այն բոլոր օրինակները, որոնք թեև կանոնիկ տարբերակը չունեն քննարկվող նյութում, բայցև բառատարբերակներ են գրաբարի համատեքստում: Գաշվի ենք առնում նաև տարբերակային ձևերի՝ քննարկվող նյութի սահմաններում ինչպէս տարբեր բաղադրությունների կազմում հանդես գալը, այնպես էլ մեկի առանձին, իսկ մյուսի բաղադրությամբ դրսևորվելը: Այստեղ հարկ ենք համարում նշելու, որ ոչ միայն տեսականորեն է հնարավոր նաև մեկ այլ տարբերակի հանդես գալը մինևույն դիրքում, այլև բառարանային տվյալների համաձայն շատերն ունեն վկայություններ և, ըստ երևութին, մեծամասնորեն հենց V դարից:

1. Զայնավորային փոփոխություններով զուգածներ

ԱՆ: Հիշատակելի է պիւ. *rag մեկը (ԳԱԲ⁹, 291) սկիզբ առած արագ–երագ¹⁰ տարբերակային զույգը, որ գործածել է Փարպեցին: Ընդ որում, քննարկվող երկերում մի քանի անգամ վկայված երագ–ի և վերջինով կազմված երագահաս, երագալուր բառերի դիմաց միայն մեկ վկայություն կա արագ տարբերակով:

ԵՒ: Այսպիսի զուգածությունները գլխավորապէս հետևանք են ե– և է–ի արտասանական ընդհանրության: Իսկ այդպիսի ընդհանրություն մեր լեզվում գոյացել էր արդեն V դարի երկրորդ կեսից¹¹: Իրողության վերաբերյալ բավա-

կանին ուշագրավ փաստեր են տրամադրում նաև Փարպեցու երկերը: Այսպես՝ երեկ-երեկ, ոսկետեսիլ-ոսկետեսիլ, հոգեշնորհ-հոգեշնորհ և այլն: Առաջին զույգի համար պետք է հաշվի առնել հետևյալը: Սովորաբար երեկ տարբերակը հայտնի է եղել «երեկո, իրիկուն» իմաստով, իսկ մյուսը՝ «նախորդ օրը»: Բայց վերոհիշյալը կանխորոշում է նաև երեկ բառի «նախօրե» իմաստով գործածություն (ՆՅԲ-«փոխանակ գրելոյ երեկ»)՝, ինչպես նկատվում է Փարպեցու մոտ: Յմտ. «ընդդր ոչ այսօր քան զերեկն և գեռանդն ցուցանի գործ յանձինս մեր լաւութեան» և «...երեկ և այսօր դեմ յանդիման խօսեցայ ընդ քեզ»: Ինչ վերաբերում է մյուս օրինակներին, ապա այս դեպքում գործ ունենք –ի վերջնահանգով բառերի հիշյալ ծայնավորի և ա հոդակապի ձուլմամբ առաջացած միաձուլյ է հոդակապի միաժամանակ և կամ է գրության:

Ո/Օ(աւ): Այսպիսի փոփոխակներով զուգաբառեր նկատվել են նաև անենահին ձեռագրերում: Գուցե այս պարագայում ևս գործել է (ինչպես ե/է) արտասանական ընդհանրության երևույթը: Յենց այս իրողության արտացոլումն են հանդիսանում նաև ենթակայական դերբայի տարբեր դրսևորումները, որ առկա են քննարկվող նյութում՝ **ծնող-ծնող, ցանկացող-ցանկացող**: Եվ ոչ քե «դրանք ունեն տարբեր ծագում, բայց իմաստային նույնության պատճառով հանդես են գալիս որպես փոփոխակներ»¹²:

Փարպեցու երկերում գործածություն ստացած ծայնավորային փոփոխություններով բառատարբերակներից են նաև՝ **գործողայ-գործողայ-գուրդայ-գուրդայ** («Սաղմոսների մեջ մի բաժանմունք, 2-3 կամ 4 տուն միասին մի գուրդայ են կազմում», ՅԱԲ), **դղորդումն-դղորդումն**. «շարժեցաւ սաստիկ դղորդմամբ աթոռն»-«Եւ սկսաւ...դղորդմամբ շարժել աթոռն»:

Որոշ զուգածնություններ առկայանում են բառավերջյան ի/զրո փոխարարներով: Փարպեցու գործերում տեղ են գտել՝ **նման-նմանի**. «Ձսոցունց բաղձայցեն զնմանս»_ «Դորին նմանեօք... կուտին և ի վերայ իմ բազում բանսարկութիւնս», **տեղ** (երեք վկայություն **տեղօք** ձևով և ի հայտ է գալիս հետևյալ կազմություններում՝ **բանակատեղ, կրուատեղ**) – **տեղի** (բավակահին լայն գործածությամբ):

Չայնավորային առանձնահատկությամբ են տարբերվում նաև հետևյալները՝ **ասպարափակ-սպարափակ, ասպարապետ-սպարապետ**: Ընդ որում, առաջին զույգի տարբերությունը պայմանավորող բաղադրիչ արմատի զուգահեռ ձևերը, ըստ ՅԱԲ-ի տվյալների, գալիս են փոխատու լեզվի տարբեր աղբյուրներից (պիլ. գլո.**aspar*, պիլ. *spar* – «վահան»): Իսկ մյուսի ծագման համար նշվում է հայրս.**spabati*, պիլ. *spahpat*, որը կազմված է *spah* «բանակ» և *pat* «պետ» բառերից:

Չայնավոր / երկբարբառ տարբերակներ

ե/ եԱ: Փարպեցու գործածությամբ այս իրողությունը արտացոլող օրինակներ են՝ **դղեակ-դղեկ, լեռոնակողմն-լեռնակողմն**: Ինչպես ակնհայտ է, առաջինում տարբերությունը հաստատված է հենց ինքնին՝ **եա>ե** անցմամբ: Իսկ երկրորդում զուգածնության պատճառ է հանդիսացել հայերենին հատուկ շեշտից կախված **եա>ե** օրինաչափական հնչյունափոխությունը և դրան հակառակ՝ անփոփոխ մնալը: Այս տեսակետից ուշագրավ է նաև մի կողմից **լեռոնախոյս**, մյուս կողմից **լեռնախոյզ** բառի գործածությունը: Թեև ՆՅԲ-ում

տարբեր բացատրություններ են տրված վերջիններիս՝ 1-ի համար «որ խոյս տայ ի լերինս», իսկ մյուսի առումով սպասելի հետևյալ բացատրությունը. «որ խուզէ յածմամբ զլերինս կամ զանցաւորս ընդ լերինս», բայց նայնպես, չի բացառվում նաև առաջինի երկրորդ առումով կամ հակառակ գործածությունը, եթե սովորական ենք համարում **զ/ս** լծորդակցությունը, ինչպես նաև հետևում ենք կոնտեքստին. «որպիսի մարդիկ են գողք, լեռոնախոյսք, գերեզմանակրկիտք», «**լեռոնախոյսք**՝ գային անկանեին ի մոխիրն» և «վատք և ոչ քաջք, որոց ոմանք ի լեռնախոյզ աւազակաց ի մէջ անցեալ ուրացութեամբ վերտին»։ Զարմանալին այն է, որ **զ-ով** տարբերակը մյուս «իմաստով» առավել հնարավոր է բացատրել, քան հենց **ս-ովը**։

Ի/եա։ Այս կարգի զուգահեռ ձևեր են ցուցաբերում անձներական թվականները և որոշյալ դերանունները, որոնցից դիտարկվող նյութում ևս համատեղ գործածությամբ օրինակներ կան։ Դրանք են՝ **երկոջին-երկոջեան, երեքին-երեքեան, ամենեքին-ամենեքեան**։

Ի/ի փոխհարաբերության հակառակ իրավիճակներ են դրսևորված հետևյալ առանձին բառերում՝ **թիրախ** (թիրախ), **խաղաղասիզ** (խաղաղասիզ)։ «ի թիրախ նետ չգիտէր ձգել», «եղև շնչին խաղաղասիզ օդոյ»։

Երկբարբառային տարբերակներ

Դին հայերենի համար շատ սովորական է **եւ-իւ** փոփոխությամբ ձևերի զուգահեռ գործածությունը։ Նշված երկբարբառները ներկայացնում են ազատ լծորդություններ։ Ինչպես նկատում է Էդ. Աղայանը, **եւ** երկբարբառի գործածության ոլորտը թեև արդեն սահմանափակ է դասական գրաբարում, բայցև «այդ սահմանափակության մեջ էլ այն ազատ լծորդության մեջ է այլ հնչույթների հետ»¹⁶։ Այստեղ հարկ ենք համարում ընդգծելու, որ **եւ-իւ** փոփոխակները ցուցաբերող բառերը Փարպեցու գործերում հիմնականում իւ գրչությամբ են։ Միայն նկատելի է հետևյալը՝ **աղբելը** (179, մյուս բոլոր օրինակները թեք հոլովներով են) – **աղբիրն** (կենաց)։ Առավել ուշագրավ փաստ է զգալի քանակությամբ գործածված **զիւղ** տարբերակի համեմատությամբ էլ ավելի շատ գործածությամբ **զեօղ-ի** դրսևորումը։ Կարելի է ենթադրել, որ վերջինս նախորդ կանոնիկ ձևի համեմատությամբ բարբառային դրսևորում է։

Վերոհիշյալից գատ, նաև նկատելի է Փարպեցու գործածությամբ **ոյ/իւ** զուգահեռներով հետևյալ օրինակը՝ **թոյն-թիւն**. «**թոյնք** իժից էին ի ներքոյ շրթանց» – «ընդէր իսկ բնաւ այնպիսի դառն և լի **թիւնօք** ծնեալ ի նոցանէ ճառեցան»։

2. Բաղաձայնական փոփոխություններով զուգածներ

Այն, որ բաղաձայնական տարբերակները բավականին տարաբնույթ են ու բազմազան, կարելի է ցույց տալ նաև Փարպեցու օրինակներով.

ա) օրինաչափ հնչյունական փոփոխություններով (հնչյունների հավելումով կամ անկումով) ներկայացող բառածներ,

բ) ստուգաբանական կրկնակներ։

Ըստ երևույթին, այս վերջին բնույթի իրողություններից ոչ բոլորն են, որ կարելի է համարել բառային տարբերակներ։ Եթե հիշյալ միավորներում պահպանված է իմաստագործառական ընդհանրությունը, ապա այս դեպքում գործ

ունենք տարբերակային ձևերի հետ, որոնք, ըստ էության, ոչ այլ ինչ են, քան հնչյունական տարատեսակության հանգող զուգածներ: Մյուսներն ընդհանուր ծագում ունեցող կամ մեկը մյուսից բխած իմաստագործառական տարբերությամբ առկայացած առանձին միավորներ են, ինչպես՝ բայլ-կաղ: Նույն սկզբունքով բառատարբերակներ չենք կարող համարել Փարպեցու լեզվում միաժամանակ գործածող հետևյալ բառերը՝ աւետաբեր-աւետաւոր, պատգամաբեր-պատգամաւոր¹⁵: Սինչդեռ, սրան հակառակ, բառային զուգածության հետ զործ ունենք հետևյալ օրինակում՝ կիսամահ-կիսամեռ «ընկեցեալ ի ձիոյն՝ թողին կիսամահ» – «եկեալ հասանէին տանուտեարքն Յայոց... յաշխարհն Յայոց... կենդանի կիսամեռ»:

Ա. Խլութիւն-ծայնեղութիւն ներկայացնող տարբերակներ

Խուլ/ ծայնեղ բաղաձայններով տարբերակներ: Այսպիսի առնչությամբ բառերը Փարպեցու երկերում ներկայացնում են հետևյալ պատկերը

Գ/Կ: Խորամանգ-խորամանկ, ձգտիմ-ձկտիմ, ցանգ-ցանկ (միշտ): Կանան եղունկն, որի գ-ով տարբերակն ավելի տարածված է, հետևաբար և կանոնական:

Պ/Տ: Բանդ-բանտ, ընդանի-ընտանի: Երևույթին բնորոշ օրինակներ են նաև՝ մի կողմից խանդաղատանք, մյուս կողմից խանտածութիւն:

Ղ/Խ: Գրական աղբյուրների տվյալները հաստատում են, որ հին հայերենում սովորական է եղել նաև խ-ի և ղ-ի լծորդակցությունը, որը հաճախ արտահայտվել է -խ/ղ-(ղ/խ) հնչյունակապակցությամբ: Դիտարկվող նյութում տեղ են գտել՝ աղքատ-ախքատ, Մախագ-Մաղխագ: Երևույթի արտացոլումն են հանդիսանում նաև՝ զեղխ, բայց զեխասեր, ախ (աղխ-ի դիմաց), թաղծալից, ձաղանք, ձաղք, բայց ձախաղէմ:

Չայնեղ/չնչեղ խուլ բաղաձայններով տարբերակներ են՝ հեգ, հիգանամ-հեք, թագչիմ, թագուցանեմ-թաքչիմ, թաքուցանեմ, թաքստոց, փափագ-փափաք:

Խուլ/չնչեղ խուլ հարաբերություն են արտահայտում՝ ապչեմ-ափչեմ, Աղեքսանդր-Աղեկսանդր:

Հարկ ենք համարում վերոհիշյալին նաև ավելացնելու Փարպեցու լեզվում տեղ գտած մի քանի այնպիսի օրինակներ, որոնց՝ գրաբարում հայտնի մեկ այլ տարբերակն է հարազատ ժամանակակից հայերենին՝ ամբիծ, ասպարես, պաղատ:

Բ. Բաղաձայնների անկմամբ կամ հավելմամբ տարբերակներ

Նախգրային գործածությունն իսկ պայմանավորել է յ-ի կցումը ծայնավորասկիզբ բառերին: Արդյունքում ստացել ենք յ-ով և առանց յ-ի ազատ տարբերակներ, որոնց միաժամանակյա կիրարկման առատությամբ այքի են ընկնում նաև Փարպեցու գործերը: Ավանդված օրինակներից են՝ աջող-յաջող, առաջագգրեալ-յառաջագգրեալ, աւելորդ-յաւելորդ, ապա-յապա/յապայ, երկար-յերկար և այլն:

Առաջին հայացքից թվում է, թե յ-ի (ոչ նախդրային) հավելում է տեղի ունեցել գրաբարի համար սովորական, նաև Փարպեցու վկայությամբ հետևյալ

զուգօրինակների երկրորդ անդամներում՝ գարնանի-գարնայնի, ծներա-նի-ծներայնի: Մինչդեռ իրականում հիշյալները համապատասխանաբար կազմված են սեռական հոլովածևից և -ային ածանցավորից -ի վերջածանցի կցմամբ: Եվ քանի որ նշվածներում առկա է իմաստային ընդհանրություն, ապա, ըստ տևության, գործ ունենք **յ/զրո** փոխհարաբերությամբ տարբերակների հետ, որը առիթ է հանդիսացել, որ ԵՅԲ-ի հեղինակները ներկայացնեն համատեղ: Հմմտ. «գաւուրս ցրտաշունչ **ծներայն**ոյն սառնամանեաց անցուցանէին» - «յածեցուցանէին զսեպուհն Սամիկոնէից զՄուշեղ և զգունդն...մինչև ցվախճանել ցրտաշունչ հողմոց **ծներան**ոյն սառնամանեաց»:

4-ի հավելում: Ընդգծվածի առումով նախ պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ հունարենից եկած **ա-ով** բառերը հայերենում հիշյալ միավորի դիմաց կամ ունեն ո կամ էլ ով հնչյունախումբը¹⁶: Այս հասկանալի է, որ երևույթը համաբանությամբ կարող էր տարածվել բառամիջում ո ունեցող տարբեր կարգի բնիկ և փոխառյալ բառերի վրա: Հիշատակվածի սահմաններում քննվող երկերն ունեն հետևյալ օրինակները, որոնք մեծ մասամբ անծնանուններ են. **Գղիհոն-Գղիհովն**, **Յակոբ-Յակովբ**, **Յոհաննէս-Յովհաննէս**, **հոռմայեցի-հռովմայեցի**, **փարաւոն**, **փարաւոնակերպ-փարաւովն**, **ինչպես նաև՝ Ենովք**, **սերովբէ**, **սիլովբայ** (< յն. «վանկ, տառ»):

Գրաբարում գործել են նաև բաղաձայնական այլ կարգի հավելման, ինչպես նաև անկման արդյունքում առաջացած զուգահեռ ձևեր: Դրանցից որոշ քանակությամբ դրսևորվել են նաև քննվող նյութում:

Յ/զրո: Համ- ածանցի ամ գրությամբ իրացված տարբերակներ են՝ **համբարակապետ-ամբարակապետ**, **համբառնամ-ամբառնամ**. «համբարծեալ առ հասարակ զծեսս ընդ երկինս՝ բարբառելով ասէին»-«ամբարծեալ զծեսս իւր՝ օրհնեաց զնոսա ըրհնութեամբ բազմա»:

Կան նաև բառասկզբյան **հ/զրո** հերթագայությամբ այլ օրինակներ՝ **հոգի-ոգի**, **Աբել-Յաբել**: Նույնպես Փարպեցու գործածությամբ են՝ **հսկայաբար**, **բայց սկայանման**. ըստ ԵՅԲ-ի առաջինն առանց **հ-ի** ունի հոդերենացին, իսկ երկրորդը միայն Փարպեցու վկայությամբ է: Պետք է փաստել, որ այս վերջին միավորներում առկա է **հ-ի** հավելում:

Ճ/զրո: **Անճնապուր** և **մազապուր** ձևերի հետ Փարպեցու կողմից միաժամանակյա գործածությամբ առկա է **անճնապուրծ**: Ստուգաբանորեն **ծ-ն** տրոհելի է, ինչպես **դ-ն** է տրոհելի նույն պուր արմատով սպրդեմ բայից: Ասել է թե նշված օրինակների զուգածությունը պայմանավորողը **ծ-ի** հավելումն է¹⁷:

Բ-ի հավելմամբ օրինակներ են՝ **բեմբ**, **սալամբ** «կաքավի ծագ կամ դահուճ թռչունը», որոնք, սակայն, առանց **բ-ի** կանոնավոր տարբերակով չեն դրսևորվել Փարպեցու լեզվում: Իսկ, հակառակը, հին հայերենի կտրվածքով **բ-ի** անկում է տեղի ունեցել հետևյալում՝ **թմրութիւն**, թեն սրա հետ մեկտեղ դիտարկվող նյութում գտնում ենք՝ **թմբրական**:

Ինչպես հայտնի է, գրաբարից փոխանցված մի խումբ միավանկ բառերում տեղի է ունեցել ն վերջնահնչյունի անկում: Այսպիսի միտում է արտահայտում Փարպեցու կողմից **կողմն** բառի առանց **ն-ի** երկու անգամ համատեղ գործածությունը, եթե, իհարկե, այն արգասիք չէ հետագա զրջագրությունների. «ի խոնարի **կողմ** երկրի ձկտեալ մօտէին»-«ի միջոյ կողման մագաղաթին...»:

Տ/զրո հարաբերությամբ հետևյալ բառազույգը նս միաժամանակ գործածվել է ուսումնասիրվող նյութում՝ կրտսեր – կրսեր, որից կրսերագոյն: Դր. Աճառյանի ներկայացմամբ առաջնայինը տ–ով տարբերակն է (ՀԱԲ):

Ինչպես սկզբում նշեցինք, Փարպեցու գործերի ամենահին, ընդ որում, եղածների մայր օրինակ հանդիսացող ամբողջական ձեռագիրը ընդօրինակված է 1672 թ.: Իսկ այս առումով չենք կարող հաշվի չառնել հետևյալը. «Դժվար է պատկերացնել՝ V դարի երկը մինչև 1672 թ. ձեռագրին հասնելը քանի տասնյակ ընդօրինակություններ է ունեցել և ինչպիսի այլափոխություններով, աղավաղումներով ու «խմբագրում–սրբագրություններով» հասել մեզ: Ընդօրինակությունների միջոցին առաջացած ակամա վրիպումներն իսկ բավական էին, որպեսզի այսօրվա բանասիրությունը նախնական բնագիրը վերականգնելու մտահոգությունն ունենար»¹⁶: Պատահիկի հրատարակիչները, այնուհետև նկատի առնելով, որ XVII դարից հին և ամբողջական ձեռագիր հայտնաբերելու հույս գրեթե չկա, բնագիրը նախնական տեսքի բերելու համար վկայակոչում են. «Ուստի մնում է մեկ ելք. ձեռագրական հավաքածուներում երևան բերել Պատմությունից քաղված հատվածներ (ցանկալի է՝ XVII դարին նախորդող շրջանին), պրպտել երբեմնի ամբողջական ձեռագրերի պոկված–պահպանված հատակոտորներ (պահպանակ կամ պատահիկ)...և բանասիրական քննության զուգորդմամբ քննել–վերականգնել բնագրի աղավաղված տեղիները»¹⁷: Դենց այդպիսի մի պատահիկ էր իրենց իսկ հայտնաբերածը: Եվ ոչ միայն սա. նաև հայտնի են երկու այլ պատահիկներ, որոնց մասին նույնպես խոսվում է հիշյալ հոդվածում:

Առաջինի մասին պետք է իմանալ հետևյալը. ՍՄՅԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի հայկական հավաքածուից 1916 թ. Վանի հավաքածուի կազմում մուտք գործած A–82 ձեռագրին որպես պահպանակ է գործածվել Ղ. Փարպեցու Պատմության «պոկված կամ պահպանված» մեկ թերթ: Իսկ ձեռագրի երկու հիշատակարաններում նշվում է «բաբունապետն Եսայի», որից և պատահիկի հրատարակիչները եզրակացնում են, որ խոսքը Գլածորի համալսարանի նշանավոր Եսայի Լշեցու (1284–1338) մասին է, ուստի այն պետք է գրված լինի նախքան մահը, նրա ռաբունապետության օրոք: Ինչ վերաբերում է հիշյալ պատահիկին, ապա վերջինիս տառանշանները ուղղակի հուշում են շատ ավելի հին լինելու մասին. հրատարակիչների կարծիքով՝ X–XI դար:

Քննական բնագրի համապատասխան հատվածի հետ անմիջական համեմատության արդյունքում պարզվում է, որ այլ, հանդուրժել, աշխարհակորոյս բառերը պատահիկում հետևյալ կերպարանքով են՝ այդ, հանտուժել, աշխահակորոյս:

Սյուև երկու պատահիկներից մեկը, որի մասին այլ առումով արդեն վերը հիշատակել ենք, հայտնաբերել է հայագետ և, եպս Պողարյանը Երուսաղեմի Ս. Դակոբյանց վանքի մատենադարանի 1419 թ. ընդօրինակված №1 հսկայակերտ ճառընտիրի II հատորում (եջ 720բ–728բ), որը համապատասխան է գիտական բնագրի 12–28 էջերին: Իսկ հաջորդը, առաջինի հրատարակիչների հավաստմամբ, հայտնի է դարձել մեր Մատենադարանի «Յուզակ ձեռագրացով», որի համաձայն գտնվում է այդ հավաքածուի № 4803 գրչագրում: Ի

դեպ, այս վերջինն էլ ընդօրինակված է հայ մատենագրության մեջ քաջ հայտնի Գրիգոր Ծերենցի խլաթեցու ձեռքով (ապրել է 1349–1425 թթ.) և համապատասխանում է քննական հրատարակության 18–38 էջերին, որ մասամբ ընդգրկված է և. Պողարյանի հրատարակած հատվածում: Դիտելի է, որ այս երկու պատահիկները ժամանակային կտրվածքով համընկնում են:

Պողարյանի հայտնաբերածի և գիտական բնագրի համապատասխան հատվածի բառային միավորների համեմատության արդյունքում էլ ստանում ենք հետևյալ պատկերը. ընդ որում, պատահիկից են բերվելիք օրինակների երկրորդ անդամները. ընտիր/ընդիր, օգտել/աւկտել, զգացուցանել/սգացուցանել, յերիւրել/երիւրել, սիւղվբայ/սիղովբայ, վախճանիմ/վաղխճանիմ, ըմպեմ/ըմբեմ, ընդհանուր/ընթանուր, աջով/աչով, խնդիրս/խնդրիս, կաթողիկոս/կաթուղիկոս, իգամուլ/եգամուլ, բովանդակ/բաւանդակ, զեղիս/զիղիս, լեալ են/լիեալ են, ցամենեսեան/ցամինեսեան, պատասխանատուութիւն/պատասխանատրութիւն:

Առաջինը հիշատակված պատահիկի հրատարակիչները գիտական բնագրի համեմատ այլ հնչյունական կերպարանքով միավորների առումով նշում են. «Ձարմանալու ոչինչ չկա, եթե խորհենք, որ Փարպեցու հնագույն պատահիկում ավանդված ենք գտնում հենց բարբառային հնչումը»: Սինչդեռ նույն իրողությունը և Պողարյանը համարում է ուղղագրական թերություններ:

Ամբողջ խնդիրն այն է, որ բոլոր տեսակի ձեռագրերը փորձում են սրբագրել ոչ միայն այն լեզվական միջոցներով, որ բոլորի համար տվյալ իրավիճակում ընդհանուր է, այլ նաև ամենահին մեկ–երկու ձեռագրերի հիման վրա, որոնց հետևանքով կարող ենք լիարժեքորեն խաթարել հիշյալ երկերի լեզվական առանձնահատկությունը:

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Չր. Սճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951:
- Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 82
- Ամենալուրջ խոչընդոտներից մեկն այն է, որ ամենահին ձեռագիրը Լազարյան ճեմարանի Ավետարանը, ընդօրինակված է 887 թ.:
- Եշվ. աշխ., էջ 82:
- Ս. Սախասյանց, 1904թ. հրատարակության «Յառաջաբան», էջ 6:
- Եռլյն տեղում, էջ է:
- Լ. Բյուզանդացի, Քննութիւն Սախասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի և Ղազարայ Փարպեցու, Յուշարձան, 1911, էջ 173:
- Բառատարբերակների մասին մանրամասնորեն տես Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարը (V դար), էջ 206–264:
- Հայերեն արմատական բառարան:
- Օրինակները ցաղված են Հայկական համաքարբան–ից և ստուգված են քննական բնագրով:
- Էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 138:
- Երբ բառգիրը հայկազեան լեզուի:
- Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 215:
- Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 329:
- աւոր վերջածանցի (ա)բեր արմատից ծագելու մասին տես Ա. Աուցիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 237:
- Տես Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 229:
- Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, с. 128–129:
- Պ. Սուրադյան, Կ. Յուզբաշյան, Ղազար Փարպեցու նորահայտ պատահիկը, Բանբեր Մատենադարանի, 1973, № 11, էջ 7–32:
- Եռլյն տեղում:

В. Хачатрян

ФОНЕТИЧЕСКИЕ ВАРИАНТЫ СЛОВ В СОЧИНЕНИЯХ ПАРПЕЦИ

Фонетические варианты слов — это те лексические единицы, которым присуще некоторое фонетическое различие и вместе с тем семантическое сходство. К концу V века в работах Лазара Парпеци, в критических изданиях, основанных на списках оригинальных манускриптов, были обнаружены различные параллельные формы (являющиеся причиной чередования гласных и согласных), множество примеров (1672). Не только тот факт, что рукопись прошла сквозь 12 столетий, но также и в частях манускриптов, написанных в ранние периоды XI, XV столетий, непосредственное сравнение соответствующих частей в критических произведениях свидетельствует о некоторых последующих изменениях. Но это не исключает параллельного использования некоторых правильных (общеразговорных) и неправильных (диалектных) форм, особенно ввиду того, что последние проявляются, в основном, в разговоре, в процессе живой речи.

Не имея альтернативы, варианты, подтвержденные в научных первоисточниках, представлены в качестве письменного свидетельства у Парпеци: դղեալ–դղեկ, աղբեր–աղբիր, բանդ–բանտ и др.

THE PHONETIC VARIANTS OF WORDS IN PARPETSY'S WORKS

The phonetic variants of the words are those word units which have some phonetic difference but semantic similarity. Different parallel forms (are the reason of vowel and consonant changes) a lot of manifestations have been found by the end of the fifth century in works of Ghazar Parpetsy; in critical original writings, which are based on the copies of original manuscripts (1672) Not only the fact that the handwriting has passed through 12 centuries, but also in the pieces of manuscripts handed in early periods of XI, XV centuries immediate comparison of the corresponding parts in scientific original writings witness some future changes. But it does not exclude the regular (general colloquial) and irregular (dialectal) several forms of parallel usage by Parpetsy, especially that the latter are manifested mainly in dialogues; in the process of living language (speech)

Having no alternatives the variants which have been confirmed in scientific originals, are presented as Parpetsy's testimony դղեակ-դղեկ, աղբեր-աղբիր, բանդ-բանտ and s.v.: